ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ
ԱՅԳԵԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Այգեկ համայնք
ՀՀ, Արմավիրի մարզ, գ. Այգեկ, (0231)65760, aygek.armavir@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

24 մայիսի 2021 թվականի N 27-Ա

ԻՆՔՆԱԿԱՄ ԿԱՌՈՒՑՎԱԾ ՇԻՆՈՒԹՅՈՒՆՆ ՕՐԻՆԱԿԱՆԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի 188-րդ հոդվածի 4-րդ կետով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2006 թվականի մայիսի 18-ի N912-Ն, 2020 թվականի հունիսի 4-ի N1023-Ն որոշումներով, նկատի ունենալով, որ կառույցի պահպանումը չի խախտում այլ անձանց իրավունքներն ու օրենքով պահպանվող շահերը, կառուցված չէ քաղաքաշինական նորմերի ու կանոնների էական խախտումներով, չի առաջացնում հարկադիր սերվիտուտ պահանջելու իրավունք և չի գտնվում Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով սահմանված հողամասերի ցանկում, հիմք ընդունելով Կարեն Նորիկի Աբրահամյանի դիմումը՝ իրեն սեփականության իրավունքով պատկանող ինքնակամ շինության օրինականացման խնդրանքով՝ *որոշում եմ.*

1. Օրինական ճանաչել Կարեն Նորիկի Աբրահամյանին սեփականության իրավունքով պատկանող, Այգեկ համայնքում գտնվող (կադաստրային ծածկագիր՝ 04-009-0002-0023, հողամասի չափը 0,0864հա) տնամերձ հողամասի վրա կառուցված ինքնակամ շինությունը՝ բնակելի տուն նկուղ՝ 17,64 քառակուսի մետր, բնակելի տուն 1 հարկ՝ 92,16 քառակուսի մետր, բնակելի տուն 2 հարկ՝ 94,08 քառակուսի մետր:
2. Ինքնակամ կառույցի օրինականացման համար 1,0 քառակուսի մետր շինության վճարը կազմում է 1422.0 դրամ (1422.0*203,88=289917.0 դրամ /երկու հարյուր ութսունինը հազար ինը հարյուր տասնյոթ դրամ/): Սույն որոշման ընդունման օրվանից 60 օրյա ժամկետում չմուծելու դեպքում սույն որոշումը համարել ուժը կորցրած:
3. Սույն որոշումից ծագող իրավունքներն ենթակա են պետական գրանցման Հայաստանի Հանրապետության կադաստրի կոմիտեի կողմից:
4. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

ԱՅԳԵԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ԿԱՐՈՒԺԱՆ ԱԲՐԱՀԱՄՅԱՆ

2021թ. մայիսի 24
գ.Այգեկ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ
ԱՅԳԵԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Այգեկ համայնք
ՀՀ, Արմավիրի մարզ, գ. Այգեկ, (0231)65760, aygek.armavir@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

24 մայիսի 2021 թվականի N 28-Ա

ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԱՋԱԿՑՈՒԹՅՈՒՆ ՑՈՒՑԱԲԵՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 46-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետի, 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետի դրույթներով, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Այգեկ համայնքի ավագանու 2020 թվականի դեկտեմբերի 24-ի N44-Ն որոշումը, <<Արարատյան Խոհանոց>> ՍՊԸ տնօրեն Սեդրակ Մամուլյանի 2021 թվականի մայիսի 24-ի գրությունը՝ *որոշում եմ.*

1. Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Այգեկ համայնքի 2021 թվականի բյուջետային ծախսերի տնտեսագիտական դասակարգման <<Նվիրատվություն այլ շահույթ չհետապնդող կազմակերպություններին>> հոդվածով նախատեսված գումարից 30 000 Հայաստանի Հանրապետության դրամ տրամադրել <<Արարատյան Խոհանոց>> ՍՊԸ-ին՝ Տոլմայի համահայկական 10-րդ փառատոնի կազմակերպմանն աջակցելու նպատակով:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

Այգեկ համայնքի ղեկավար՝ _____ **ՎԱՐՈՒԺԱՆ ԱԲՐԱՀԱՄՅԱՆ**

2021թ. մայիսի 24
գ.Այգեկ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ
ԱՅԳԵԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Այգեկ համայնք
ՀՀ, Արմավիրի մարզ, գ. Այգեկ, (0231)65760, aygek.armavir@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

26 մայիսի 2021 թվականի N 29-Ա

ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ ՍՏԵՂԾԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզպետարանի 2021 թվականի մայիսի 25-ի N01/8/03199-2021 գրությունը, Արմավիրի մարզի Այգեկ համայնքում ցանքատարածությունների փաստացի հաշվառում իրականացնելու նպատակով՝ ***որոշում եմ.***

1. Ստեղծել հանձնաժողով՝ համաձայն հավելվածի:
2. Հանձնաժողովի նախագահ Գայանե Սարգսյանին՝ 2021 թվականի հունիսի 1-ի դրությամբ կատարել փաստացի ցանքատարածությունների հաշվառում, փաստաթղթերը մինչև 2021 թվականի հունիսի 5-ը ներկայացնել համայնքի ղեկավարին և ազգային վիճակագրական ծառայության Արմավիրի մարզային գործակալություն:
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

Այգեկ համայնքի ղեկավար՝ ՎԱՐՈՒԺԱՆ ԱԲՐԱՀԱՄՅԱՆ

2021թ. մայիսի 26
գ.Այգեկ

Հավելված
Հայաստանի Հանրապետության
Արմավիրի մարզի Այգեկ
համայնքի ղեկավարի
2021 թվականի մայիսի 26-ի N29-Ա որոշման

ԿԱԶՄ

ՑԱՆՔԱՏԱՐԱԾՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀԱՇՎԱՌՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ

Հանձնաժողովի նախագահ -	Սարգսյան Գայանե -	ՀՀ Արմավիրի մարզի Այգեկի համայնքապետարանի աշխատակազմի քարտուղար
Հանձնաժողովի անդամներ -	Հովհաննիսյան Գոհար -	ՀՀ Արմավիրի մարզի Այգեկի համայնքապետարանի աշխատակազմի երկրորդ կարգի մասնագետ
	Նազարյան Ռոբերտ -	ՀՀ Արմավիրի մարզի Այգեկ համայնքի բնակիչ, ջրաշխ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ
ԱՅԳԵԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Այգեկ համայնք
ՀՀ, Արմավիրի մարզ, գ. Այգեկ, (0231)65760, aygek.armavir@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

26 մայիսի 2021 թվականի N 30-Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ԱՅԳԵԿ ՀԱՄԱՅՆՔԻ 2021 ԹՎԱԿԱՆԻ ԲՅՈՒՋԵԻ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԾԱԽՍԵՐԻ ԿԱՏԱՐՄԱՆ ՆԱԽԱՀԱՇՎՈՒՄ ՎԵՐԱԲԱՇԽՈՒՄՆԵՐ ԵՎ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑԻ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով, <<Հայաստանի Հանրապետության բյուջետային համակարգի մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 33-րդ հոդվածի 3-րդ մասով, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Այգեկ համայնքի ավագանու 2020 թվականի դեկտեմբերի 24-ի N44-Ն որոշումը՝ ***որոշում եմ.***

1. Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Այգեկ համայնքի 2021 թվականի բյուջեի ֆինանսական ծախսերի կատարման նախահաշվում կատարել վերաբաշխումներ և ժամանակացույցի փոփոխություն՝
   1) Ընդհանուր բնույթի հանրային ծառայություններ 1.6.1 բաժնի՝
      1.1) 4239 հոդվածից 370,0 հազար դրամն ուղղել 4251 հոդվածին,
      1.2) 5122 հոդվածից 1500,0 հազար դրամն ուղղել 5112 հոդվածին:
   2) Ընդհանուր բնույթի հանրային ծառայություններ 4819 հոդվածի 4-րդ եռամսյակի գումարից 50,0 հազար դրամն ուղղել 2-րդ եռամսյակ:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

Այգեկ համայնքի ղեկավար՝ _____ **ՎԱՐՈՒԺԱՆ ԱԲՐԱՀԱՄՅԱՆ**

2021թ. մայիսի 26
գ.Այգեկ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ
ԱՅԳԵԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Այգեկ համայնք
ՀՀ, Արմավիրի մարզ, գ. Այգեկ, (0231)65760, aygek.armavir@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

14 հունիսի 2021 թվականի N 31-Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ԱՅԳԵԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՍԱՀՄԱՆՈՒՄ ԳՏՆՎՈՂ ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ ԲԱՐՁՐԱՐԺԵՔ ՀՈՂԱՏԵՍՔԵՐՆ ԱՎԵԼԻ ՑԱԾՐԱՐԺԵՔ ՀՈՂԱՏԵՍՔԵՐԻ ՓՈԽԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2009 թվականի սեպտեմբերի 17-ի N1066-Ն որոշմամբ հաստատված հավելվածի N1-ի 5-րդ և 9-րդ կետերով, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզպետի 2009 թվականի նոյեմբերի 12-ի թիվ-151 կարգադրությամբ ստեղծված բարձրարժեք հողատեսքերն ավելի ցածրարժեք հողատեսքերի փոխադրող հանձնաժողովի դրական եզրակացությունը՝ *որոշում եմ.*

1. Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Այգեկ համայնքի վարչական սահմանում գտնվող Անդրանիկ Ջիվանի Անդրեասյանին սեփականության իրավունքով պատկանող գյուղատնտեսական բարձրարժեք հողատեսքը՝ պտղատու այգի, կադաստրային ծածկագիրը՝ 04-009-0165-0002, 0,2518 հեկտար, փոխադրել ավելի ցածրարժեք հողատեսքի՝ 0,2518 հեկտար վարելահողի:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

ԱՅԳԵԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ _____ ՎԱՐՈՒԺԱՆ ԱԲՐԱՀԱՄՅԱՆ

2021թ. հունիսի 14
գ.Այգեկ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ
ԱՅԳԵԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Այգեկ համայնք
ՀՀ, Արմավիրի մարզ, գ. Այգեկ, (0231)65760, aygek.armavir@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

14 հունիսի 2021 թվականի N 32-Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ԱՅԳԵԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՍԱՀՄԱՆՈՒՄ ԳՏՆՎՈՂ ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ ԲԱՐՁՐԱՐԺԵՔ ՀՈՂԱՏԵՍՔԵՐՆ ԱՎԵԼԻ ՑԱԾՐԱՐԺԵՔ ՀՈՂԱՏԵՍՔԵՐԻ ՓՈԽԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2009 թվականի սեպտեմբերի 17-ի N1066-Ն որոշմամբ հաստատված հավելվածի N1-ի 5-րդ և 9-րդ կետերով, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզպետի 2009 թվականի նոյեմբերի 12-ի թիվ-151 կարգադրությամբ ստեղծված բարձրարժեք հողատեսքերն ավելի ցածրարժեք հողատեսքերի փոխադրող հանձնաժողովի դրական եզրակացությունը՝ *որոշում եմ.*

1. Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Այգեկ համայնքի վարչական սահմանում գտնվող Ելենա Քոսյանյանին համասեփականության իրավունքով պատկանող գյուղատնտեսական բարձրարժեք հողատեսքը՝ պտղատու այգի, կադաստրային ծածկագիրը՝ 04-009-0142-0001, 0,65 հեկտար, փոխադրել ավելի ցածրարժեք հողատեսքի՝ 0,65 հեկտար վարելահողի:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

ԱՅԳԵԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ _____ ՎԱՐՈՒԺԱՆ ԱԲՐԱՀԱՄՅԱՆ

2021թ. հունիսի 14
գ.Այգեկ